Գր. 18.06.2013թ.
Կոդ՝ 10813239

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ

ՀՐԱՄԱՆԸ

13.06.2013 թվականի N 96-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԻ ՎԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՎԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 8-Ի N78-Ն ՀՐԱՄԱՆԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի դրույթներով, «Պետական վիճակագրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ և 17-րդ հոդվածների, Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի մայիսի 15-ի «Հայաստանի Հանրապետության էներգետիկայի նախարարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկը «Հայաստանի Հանրապետության էներգետիկայի և բնական պաշարների նախարարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկ վերանվանելու, Հայաստանի Հանրապետության էներգետիկայի և բնական պաշարների նախարարության կանոնադրությունը և աշխատակազմի կառուցվածքը հաստատելու մասին» N654-Ն որոշմամբ հաստատված կանոնադրության 8-րդ կետի 16-րդ ենթակետի և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2013 թվականի մարտի 27-ի «Հայաստանի Հանրապետության էներգետիկայի և բնական պաշարների նախարարության բիզնես գործընթացների կանոնակարգման միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» N237-Ա որոշմամբ հաստատված հավելվածի 1-ին կետի պահանջներով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հաստատել՝

1) Հայաստանի Հանրապետության էներգետիկայի և բնական պաշարների նախարարության վարչական վիճակագրական ռեգիստրի վարման կարգը՝ համաձայն N1 հավելվածի,

2) Հայաստանի Հանրապետության էներգետիկայի և բնական պաշարների նախարարության վարչական վիճակագրական հաշվետվությունների ձևերը՝ համաձայն N2 և N3 հավելվածների:

2. Հայաստանի Հանրապետության էներգետիկայի և բնական պաշարների նախարարության աշխատակազմի ղեկավարին՝

ապահովել սույն հրամանի պետական գրանցումը Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունում:

3. Սույն հրամանի կատարման նկատմամբ հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության էներգետիկայի և բնական պաշարների նախարարության աշխատակազմի ղեկավարին:

4. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության էներգետիկայի և բնական պաշարների նախարարի 2013թ. մայիսի 8-ի «Հայաստանի Հանրապետության էներգետիկայի և բնական պաշարների նախարարության վարչական վիճակագրական ռեգիստրի վարման կարգը և վարչական վիճակագրական հաշվետվությունների ձևերը հաստատելու մասին» N78-Ն հրամանը:

5. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԱՐՄԵՆ ՄՈՎՍԻՍՅԱՆ

Հավելված N1
Հայաստանի Հանրապետության
էներգետիկայի և բնական պաշարների
նախարարի 2013թ. հունիսի «13»-ի N 96-Ն
հրամանի

ԿԱՐԳ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԻ ՎԱՐՄԱՆ

I ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով սահմանվում է Հայաստանի Հանրապետության էներգետիկայի և բնական պաշարների նախարարության (այսուհետև՝ նախարարություն) համակարգում՝ էլեկտրական էներգիայի ցուցանիշների վարչական վիճակագրական ռեգիստրի վարման (այսուհետ՝ վարչական ռեգիստր)՝ ըստ սահմանված ցուցանիշների՝ հայկական էներգահամակարգի արտադրող կայանների էլեկտրական էներգիայի արտադրության, առաքման և ապրանքային արտադրանքների մասին ու էլեկտրական էներգիայի արտահանման և ներմուծման մասին տեղեկատվությունների հավաքագրման, շտեմարանների ստեղծման ընթացակարգը՝ համաձայն սույն հրամանի 1-ին կետի 2-րդ ենթակետով հաստատված N2 և N3 հավելվածների:

2. Վարչական ռեգիստրը նախարարության կողմից վարվող վիճակագրական տվյալների բազաներ են (շտեմարաններ), որոնք հանդիսանում են ճյուղային (գերատեսչական) հաշվառման (վիճակագրության) վարման արդյունք: Վարչական ռեգիստրները Հայաստանի Հանրապետության պետական վիճակագրական տեղեկատվության միասնական համակարգի բաղկացուցիչ մաս են :

II ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ՎԱՐՉԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԻ ՎԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3. Սույն կարգի համաձայն նախարարության աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական վարչությունը (այսուհետև՝ վարչություն) իրականացնում է էլեկտրական էներգիայի ցուցանիշների վարչական ռեգիստրի վարում՝ ապահովելով սույն հրամանի 1-ին կետի 2-րդ ենթակետով հաստատված հավելված 2-ի և հավելված 3-ի հաշվետվությունների ձևերով ու ժամկետներում վիճակագրական հաշվետվությունների ստացումը և տրամադրումը Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայությանը:

4. Մինչև յուրաքանչյուր ամսվա 10-ը նախարարության ենթակայության «Հաշվարկային կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությունը նախորդ ամսվա

էլեկտրական էներգիայի ցուցանիշների վերաբերյալ սույն հրամանի 1-ին կետի 2-րդ ենթակետով հաստատված թիվ 1 (ամսական) և թիվ 2 (ամսական) հաշվետվությունները (էլեկտրական էներգիայի արտադրության, առաքման, ապրանքային արտադրանքի, ներմուծման և արտահանման ցուցանիշների մասին) ներկայացնում է վարչությանը:

5. «Հաշվարկային կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությունից ստացված՝ նախորդ ամսվա էլեկտրական էներգիայի ցուցանիշների վերաբերյալ սույն հրամանի 1-ին կետի 2-րդ ենթակետով հաստատված թիվ 1 (ամսական) և թիվ 2 (ամսական) հաշվետվությունները վարչությունը մինչև յուրաքանչյուր ամսվա 15-ը ներկայացնում է Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայությանը:

6. Էլեկտրական էներգիայի ցուցանիշների վարչական ռեգիստրի տվյալները վարչության կողմից մինչև յուրաքանչյուր ամսվա 20-ը տրամադրվում են նախարարության աշխատակազմի համակարգչային տեխնիկայի ստորաբաժանմանը (այսուհետև՝ համակարգչային պատասխանատու)՝ դրանք նախարարության սերվերում 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում զետեղելու համար:

7. Նախարարության աշխատակազմի ստորաբաժանումներն օգտվում են նախարարության սերվերում զետեղված էլեկտրական էներգիայի ցուցանիշների վարչական ռեգիստրի էլեկտրոնային շտեմարաններից համակարգչային պատասխանատուի կողմից համակարգչային մուտքի իրավունքի տրամադրման միջոցով: Մուտքի թույլտվություն ունեցող պաշտոնատար անձանց ցանկը սահմանում է նախարարության աշխատակազմի ղեկավարը:

8. Վարչական ռեգիստրի վարման ընթացքում թույլ տրված սխալների և վրիպակների հայտնաբերման դեպքում ուղղումները կատարվում են այն ժամանակաշրջան(ներ)ի վիճակագրական դիտարկման փաստաթղթերում, որոնցում թույլ են տրվել սխալներ կամ վրիպակներ, իսկ եթե սխալների կամ վրիպակների կոնկրետ ժամկետները հնարավոր չէ պարզել, ապա վիճակագրական դիտարկման փաստաթղթերի տվյալների ուղղումները կատարվում են այն հայտնաբերելուց հետո, առաջին իսկ վիճակագրական դիտարկման փաստաթղթերում: Սխալների և վրիպակների ուղղումները կատարվում են վարչության կողմից:

III ՎԱՐՉԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԻ ՎԱՐՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԾԱԳՈՂ ԱՅԼ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ

9.Վարչական ռեգիստրի վարման բնագավառում ծագող այլ հարաբերությունները կարգավորվում են «Պետական վիճակագրության մասին» ՀՀ օրենքով, այլ օրենքներով, իսկ օրենքով նախատեսված դեպքերում և սահմաններում նաև այլ իրավական ակտերով:

Հավելված N 2
ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարի
20 13 թվականի հունիսի «13»-ի
N 96 -Ն հրամանի

Համաձայնեցված է
ՀՀ վիճակագրության պետական խորհրդի հետ
«03» մայիսի 2013թ. թիվ 12- Ա որոշմամբ

ՀՀ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հայկական էնեգահամակարգի արտադրող կայանների էլեկտրական էներգիայի արտադրության, առաքման և ապրանքային արտադրանքների մասին

Ներկայացվում է համաձայն «Պետական վիճակագրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի և 17-րդ հոդվածի ա) կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի մայիսի 15-ի «Հայաստանի Հանրապետության էներգետիկայի նախարարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկը «Հայաստանի Հանրապետության էներգետիկայի և բնական պաշարների նախարարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկ վերանվանելու, Հայաստանի Հանրապետության էներգետիկայի և բնական պաշարների նախարարության կանոնադրությունը և աշխատակազմի կառուցվածքը հաստատելու մասին» N654-Ն որոշմամբ հաստատված կանոնադրության 8-րդ կետի 16-րդ ենթակետի, Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի կողմից հաստատվող «Պետական վիճակագրական աշխատանքների տարեկան ծրագրի», Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2002 թվականի մայիսի 10-ի «Վարչական (տեղեկատվական) ռեգիստրների վարման և դրանցից տեղեկատվության ստացման կարգը հաստատելու մասին» թիվ 109 որոշմամբ հաստատված կարգի:

Ներկայացնում է_____«Հաշվարկային կենտրոն» ՓԲԸ _____
(իրավաբանական անձի անվանումը)

Մարզը _____/_/_/

Գտնվելու վայրը
(գործունեության իրականացման վայրը) _____/_/_/_/_/
(փոստային դասիչը)

Էլեկտրոնային փոստի հասցեն _____@_____
(Լրացվում է ըստ անհրաժեշտության իրավաբանական անձանց համար)

ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրում գրանցման համարը
/_/_/_/_/_/_/_/_/_/

Նույնականացման (իդենտիֆիկացիոն) կոդը /_/_/_/_/_/_/

Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) /_/_/_/_/_/_/

Պետական ռեգիստրում գրանցման համարը և նույնականացման (իդենտիֆիկացիոն) ծածկագիրը լրացվում են ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության կողմից տրված գրանցման վկայականի

ՁԵՎ ԹԻՎ 1 (ամսական)

Հաստատված է՝
ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարի
20 13 թ.
հունիսի «13»-ի թիվ 96-Ն հրամանով

Ներկայացվում է՝
ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն

Հաշվետվության ներկայացման ժամկետը ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն՝
մինչև հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող ամսվա 10-ը

Հաշվետվություն

Հայկական էներգահամակարգի արտադրող կայանների էլեկտրական էներգիայի արտադրության, առաքման և ապրանքային արտադրանքների մասին

	Էլեկտրական էներգիա արտադրող կայանների անվանումները	Չափի միավոր	20_____թ. (հաշվետու տարի) _____ (ամիս)					20_____թ. (նախորդ տարի) _____ (ամիս)					
			Էլեկտրական էներգիայի արտադրություն	Սեփական կարիքներ և կորուստներ ուժային տրանսֆորմատորներում	Էլեկտրական էներգիայի օգտակար առաքում (կ.4-կ.5)	Գործող սակագին առանց ԱԱՀ-ի (դրամ կՎտժ)	Վաճառքային արտադրանք գործող գներով առանց ԱԱՀ-ի (կ.6×կ.7) (հազ. դրամ)	Էլեկտրական էներգիայի արտադրություն	Սեփական կարիքներ և կորուստներ ուժային տրանսֆորմատորներում	Էլեկտրական էներգիայի օգտակար առաքում (կ.9-կ.10)	Գործող սակագին՝ (առանց ԱԱՀ-ի) (դրամ կՎտժ)	Ապրանքային արտադրանք գործող գներով (առանց ԱԱՀ-ի) (կ.11×կ12) (հազ. դրամ)	Էլեկտրական էներգիայի արտադրություն
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14
1	«ՀԱԷԿ» ՓԲԸ - ընդամենը												
	1) էլեկտրական էներգիա	հազ. կՎտժ											
	2) հզորություն	հազ. Մվտ											
2	«Հրազ.ՋԷԿ» ԲԲԸ - ընդամենը												
	1)էլեկտրական էներգիա	հազ. կՎտժ											
	2) հզորություն	հազ. Մվտ											
3	«ՀայՌուսգազարդ» ՓԲԸ (Հրազդան - 5) - ընդամենը												
	1) ներքին շուկա												
	ա. էլեկտրական էներգիա	հազ. կՎտժ											
	բ. հզորություն	հազ. Մվտ											
	2) արտահանում	հազ. կՎտժ											
	3) կորուստներ արտահանումից	հազ. կՎտժ											
4	«Երևանի ՋԷԿ» ՓԲԸ - ընդամենը												
	1)էլեկտրական էներգիա	հազ. կՎտժ											
	2) հզորություն	հազ. Մվտ											
5	«Երևանի ՋԷԿ» ՓԲԸ (շագ.համ.գիկլով աշխ.էն.բլոկ) - ընդամենը												
	1) ներքին շուկա												
	ա. էլեկտրական էներգիա	հազ. կՎտժ											
	բ. հզորություն	հազ. Մվտ											
	2) արտահանում	հազ. կՎտժ											
6	«ՄԷԿ» ՓԲԸ - ընդամենը												
	1)էլեկտրական էներգիա	հազ. կՎտժ											
	2) հզորություն	հազ. Մվտ											
7	«Ողոտանի ՀԷԿ-ներ» ՓԲԸ - ընդամենը												
	1) ներքին շուկա												
	ա. էլեկտրական էներգիա	հազ. կՎտժ											
	բ. հզորություն	հազ. Մվտ											
	2) արտահոսք	հազ. կՎտժ											
	3) ներհոսք	հազ. կՎտժ											
8	«Ձորագետ Հիդրո ՀԷԿ» ՍՊԸ	հազ. կՎտժ											
9	Փոքր էլեկտրակայաններ - ընդամենը												
	1)	հազ. կՎտժ											
	2)	հազ. կՎտժ											
	3)	հազ. կՎտժ											
10	Ընդամենը էլեկտրական էներգիա	հազ. կՎտժ											
	1) ատոմային էլեկտրակայաններ	հազ. կՎտժ											
	2) ջերմաէլեկտրակայաններ	հազ. կՎտժ											
	3) հիդրոէլեկտրակայաններ	հազ. կՎտժ											
	4) այլ աղբյուրներից	հազ. կՎտժ											

Ղեկավար՝ _____ (ստորագրություն) _____ (անուն, ազգանուն)

Լրացնող՝ _____ (ստորագրություն) _____ (անուն, ազգանուն)

հավելված 2

20_____թ. հունվար_____ (հաշվետու տարի) (տարեսկիզբ)				20_____ թ. հունվար_____ (նախորդ տարի) (տարեսկիզբ)				
Սեփական կարիքների և կցորդատեր ուժային տրանսֆորմատորներում	Էլեկտրական էներգիայի օգտակար առաքում (գ.14-գ.15)	Գործող տակդիր՝ առանց ԱԱՀ-ի (դրամ կՎտժ)	Ապրանքային արտադրանք գործող գներով առանց ԱԱՀ-ի (գ.16գ.17) (հազ. դրամ)	Էլեկտրական էներգիայի արտադրություն	Սեփական կարիքներ և կցորդատեր ուժային տրանսֆորմատորներում	Էլեկտրական էներգիայի օգտակար առաքում (գ.19-գ.20)	Գործող տակդիր՝ առանց ԱԱՀ-ի (դրամ կՎտժ)	Ապրանքային արտադրանք գործող գներով (առանց ԱԱՀ-ի) (գ.21գ22) (հազ. դրամ)
15	16	17	18	19	20	21	22	23

Հավելված N 3
ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարի
20 13 թվականի հունիսի «13»-ի
N 96-Ն հրամանի

Համաձայնեցված է
ՀՀ վիճակագրության պետական խորհրդի հետ
«03» մայիսի 2013թ. թիվ 12- Ա որոշմամբ

ՀՀ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՎԱՐՉԱԿԱՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Էլեկտրական էներգիայի արտահանման և ներմուծման մասին

Ներկայացվում է համաձայն «Պետական վիճակագրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի և 17-րդ հոդվածի ա) կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի մայիսի 15-ի «Հայաստանի Հանրապետության էներգետիկայի նախարարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկը «Հայաստանի Հանրապետության էներգետիկայի և բնական պաշարների նախարարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկ վերանվանելու, Հայաստանի Հանրապետության էներգետիկայի և բնական պաշարների նախարարության կանոնադրությունը և աշխատակազմի կառուցվածքը հաստատելու մասին» N654-Ն որոշմամբ հաստատված կանոնադրության 8-րդ կետի 16-րդ ենթակետի, Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի կողմից հաստատվող «Պետական վիճակագրական աշխատանքների տարեկան ծրագրի», Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2002 թվականի մայիսի 10-ի «Վարչական (տեղեկատվական) ռեգիստրների վարման և դրանցից տեղեկատվության ստացման կարգը հաստատելու մասին» թիվ 109 որոշմամբ հաստատված կարգի:

Ներկայացնում է_____«Հաշվարկային կենտրոն» ՓԲԸ _____
(իրավաբանական անձի անվանումը)

Մարզը _____/_/_/

Գտնվելու վայրը
(գործունեության իրականացման վայրը) _____/_/_/_/_/
(փոստային դասիչը)

Էլեկտրոնային փոստի հասցեն _____@_____
(Լրացվում է ըստ անհրաժեշտության իրավաբանական անձանց համար)

ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրում գրանցման համարը
/_/_/_/_/_/_/_/_/_/_/

Նույնականացման (իդենտիֆիկացիոն) կոդը /_/_/_/_/_/_/

Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) /_/_/_/_/_/_/

Պետական ռեգիստրում գրանցման համարը և նույնականացման (իդենտիֆիկացիոն) ծածկագիրը լրացվում են ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության կողմից տրված գրանցման վկայականի

ՁԵՎ ԹԻՎ 2 (ամսական)

Հաստատված է՝
ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարի
20 13 թ.
հունիսի «13»-ի թիվ 96-Ն հրամանով

Ներկայացվում է՝
ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն

Հաշվետվության ներկայացման ժամկետը ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն՝
մինչև հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող ամսվա 10-ը

Հաշվետվություն

էլեկտրական էներգիայի արտահանման և ներմուծման մասին

հ/հ	20__թ. ամիսներ	ԱՐՏԱՀԱՆՈՒՄ								ՆԵՐՄՈՒԾՈՒՄ							
								Ընդամենը								Ընդամենը	
		Քանակը մլն կՎտժ	Արժեքը մլն դրամ	Քանակը մլն կՎտժ	Արժեքը մլն դրամ	Քանակը մլն կՎտժ	Արժեքը մլն դրամ	Քանակը մլն կՎտժ	Արժեքը մլն դրամ	Քանակը մլն կՎտժ	Արժեքը մլն դրամ	Քանակը մլն կՎտժ	Արժեքը մլն դրամ	Քանակը մլն կՎտժ	Արժեքը մլն դրամ	Քանակը մլն կՎտժ	Արժեքը մլն դրամ
1	Հունվար																
2	Փետրվար																
3	Մարտ																
4	Ապրիլ																
5	Մայիս																
6	Հունիս																
7	Հուլիս																
8	Օգոստոս																
9	Սեպտեմբեր																
10	Հոկտեմբեր																
11	Նոյեմբեր																
12	Դեկտեմբեր																
	ԸՆԴԱՄԵՆԸ																

Ղեկավար՝ _____ (ստորագրություն) _____ (անուն, ազգանուն)

Լրացնող՝ _____ (ստորագրություն) _____ (անուն, ազգանուն)